«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՆԱԽԱԳԻԾ
Հաստատված է
ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի
2020թ. հունվարի 31-ի նիստում
Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝
Գ. Ա. Մուրադյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) տնօրենի (այսուհետ՝ տնօրեն) թափուր պաշտոնի հավակնորդների առաջադրման, ընտրությունների անցկացման, տնօրենի նշանակման և նրա հետ աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:
1.2. Տնօրենի ընտրության կանոնակարգը հաստատում է ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ):
1.3. Տնօրենի ընտրությունների կազմակերպման ծախսերը կատարվում են ԵՊՀ միջոցների հաշվին:

2. ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1. Մասնաճյուղում տնօրենի թափուր պաշտոն առաջանալու դեպքում խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ:
2.2. Մրցույթի անցկացումից առնվազն 30 օր առաջ, տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է ԵՊՀ ինտերնետային կայքում, ինչպես նաև առնվազն 5 զանգվածային լրատվության միջոցներով (հանրապետական ռադիո, հեռուստատեսություն, մամուլ) հնգօրյա պարբերականությամբ՝ առնվազն երկու անգամ: Հայտարարությունը առաքվում է

նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հիմնական բուհեր և գիտական կենտրոններ:

(2.2-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ ՀԽ 06.11.2024 թ. N 8-Լ որոշմամբ)

2.3. Հայտարարության տեքստում պարտադիր է նշել՝

ա) մրցույթին մասնակցելու համար դիմումների ընդունման վայրը և ժամկետը,

բ) մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը,

գ) մրցույթին մասնակցելու համար սույն կանոնակարգի 2.4 կետում սահմանված փաստաթղթերի ցանկը,

դ) սույն կանոնակարգի 3.2 կետով սահմանված տնօրենի հավակնորդին ներկայացվող պահանջները:

2.4. Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում, իսկ Մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ ստորաբաժանման համապատասխան որոշումը և հավակնորդի գրավոր համաձայնությունը,

բ) լուսանկար,

գ) ինքնակենսագրություն/ռեզյումե,

դ) թեկնածուի բարձրագույն կրթության դիպլոմի և գիտական աստիճանը հավաստող վկայականի պատճենները,

ե) հավակնորդի գործունեության ծրագիր՝ փակ և կնքված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

Սույն կետի «գ», «դ» և «ե» ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը ներկայացվում է նաև էլեկտրոնային տեսքով՝ . pdf ձևաչափով:

(2.4-րդ կետի «դ» ենթակետը փոփոխվել է ԵՊՀ ՀԽ 06.11.2024 թ. N 8-Լ որոշմամբ)

2.5. Մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի հանձնումն ավարտվում է մրցույթի անցկացումից 15 օր առաջ:

2.6. Մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (համարակալված և յուրաքանչյուր էջի հետնամասում ստորագրված) հանձնվում է խորհրդի քարտուղարին՝ առձեռն կամ փոստով:

2.7. Հավակնորդների՝ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերն ընդունելու նպատակով ԵՊՀ-ում բացվում է գործերի ընդունման գրանցամատյան՝ էջերի համարակալմամբ, կարված և կնքված:

Գրանցամատյանի լրացված էջը կնքվում և փակվում է յուրաքանչյուր օրվա ավարտին:

2.8. Փոստային առաքման միջոցով ուղարկված փաստաթղթերը համարվում են ժամկետում տրված, եթե ստացվել են մինչև փաստաթղթերի ընդունման համար

սահմանված ժամկետը լրանալը: Փոստային առաքման դեպքում փաստաթղթերն ընդունող մարմինը դրանց ստացման մասին գրավոր ծանուցում է հավակնորդին:

2.9. Փաստաթղթերի առձեռն հանձնման դեպքում խորհրդի քարտուղարը հավակնորդին տրամադրում է փաստաթղթերի հանձնումը հավաստող տեղեկանք:

2.10. Հայտերը ընդունելիս խորհրդի քարտուղարը պարտավոր է ստուգել հայտի համապատասխանությունը սույն կանոնակարգի 2.4 կետում ներկայացված պահանջներին: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը տեղեկացվում է այդ մասին նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեկօրյա ժամկետում, պատվիրված նամակով՝ հանձնման մասին հետադարձ ծանուցմամբ, հնարավորության դեպքում՝ նաև էլ. փոստով և հեռախոսազանգով: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:

2.11. Հայտերի ընդունման ավարտի հաջորդ օրը խորհրդի քարտուղարն ընդունված փաստաթղթերի փաթեթը կից գրությամբ հանձնում է խորհրդի նախագահին: Խորհրդի նախագահը մրցույթի անցկացումից առնվազն 10 օր առաջ՝

ա) խորհրդի անդամներին է ուղարկում յուրաքանչյուր հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի պատճենները,

բ) կազմակերպում է հավակնորդների անվան և ազգանվան, գիտական աստիճանի և կոչման, զբաղեցրած պաշտոնի, ինչպես նաև առաջադրման եղանակի վերաբերյալ տեղեկատվության տարածում ԵՊՀ-ում և Մասնաճյուղում (ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ ինտերնետային կայքերում, ֆակուլտետների հայտարարությունների տախտակներին և այլն),

գ) ապահովում է փաստաթղթերի պատճենների առկայությունը ԵՊՀ գրադարանում:

3. ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Տնօրենի թափուր պաշտոնի թեկնածուներն առաջադրվում են Մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կամ ինքնաառաջադրմամբ:

3.2 ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն կարող է առաջադրվել այն անձը, որն ունի գիտական աստիճան: Նույն անձը չի կարող ավելի քան անընդմեջ 2 անգամ ընտրվել ԵՊՀ մասնաճյուղի տնօրեն:

(3.2-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ ՀԽ 06.11.2024 թ. N 8-Լ որոշմամբ)

4. ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

4.1. Տնօրենի ընտրության համար գումարված խորհրդի նիստը նախապատրաստում և նախագահում է խորհրդի նախագահը: Տնօրենի ընտրության նիստը դռնփակ է (բացառություն է արվում տնօրենի պաշտոնի՝ խորհրդի անդամ չհանդիսացող հավակնորդների համար):

4.2. Նիստի օրակարգը հետևյալն է.

ա) հավակնորդների՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,

բ) թեկնածուների ծրագրերի ներկայացում,

գ) հարցերի ներկայացում հավակնորդներին և խորհրդի անդամների ելույթներ,

դ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,

ե) տնօրեն ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն,

զ) տնօրենի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

4.3. Խորհրդի՝ տնօրենի ընտրության համար գումարված նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

4.4. Բացառությամբ սույն կանոնակարգի 4.6 և 5.18 կետերով նախատեսված որոշումների, խորհրդի մյուս որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.5. Խորհրդի նիստին տնօրենի պաշտոնի հավակնորդի ներկայությունը պարտադիր է, սակայն նրա բացակայությունը հիմք չէ նրա թեկնածությունը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

4.6. Օրակարգի առաջին հարցով խորհրդի քարտուղարը զեկուցում է տնօրենի թեկնածուների՝ սույն կանոնակարգի պահանջներին բավարարելու հարցը: Այնուհետև զեկուցողը պատասխանում է առաջացած հարցերին: Խորհրդի ցանկացած անդամ կարող է առաջարկ ներկայացնել հավակնորդին թեկնածուների ցուցակից հանելու վերաբերյալ՝ հիմնավորելով, թե սույն կանոնակարգի որ պահանջներն են խախտված: Հավակնորդին ցուցակից հանելու առաջարկը խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության: Հավակնորդը հանվում է ցուցակից, եթե առաջարկին կողմ է քվեարկել նիստին ներկա անդամների առնվազն երկու երրորդը:

4.7. Օրակարգի երկրորդ հարցով խորհրդի նախագահը ծրագրային ելույթների համար, ըստ ազգանունների այբբենական հերթականության, ձայնը տալիս է հավակնորդներին: Յուրաքանչյուր հավակնորդ ունի առավելագույնը 20 րոպե տևողությամբ ելույթի իրավունք: Յուրաքանչյուր հավակնորդի ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարում է հարցերի հերթագրում, որից հետո խորհրդի հերթագրված անդամները, ըստ հերթագրման հերթականության, ստանում են թեկնածուին հարց տալու հնարավորություն: Հարցի և պատասխանի տևողությունը պետք է հակիրճ լինի: Թեկնածուին տրվող հարցերը կարող են վերաբերել միայն

նրա կողմից ներկայացված փաստաթղթերին կամ ծրագրային ելույթին: Հարցերը և պատասխանները արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից:

4.8. Բոլոր թեկնածուներին ուղղված հարցերի և նրանց պատասխանների ավարտից հետո սկսվում է քննարկում: Խորհրդի անդամների ելույթները կարող են դադարեցվել խորհրդի որոշմամբ: Ելույթ ունեցողներին հարցեր չեն տրվում:

4.9. Խորհրդի նիստերը կարող են ընդմիջվել խորհրդի որոշմամբ:

4.10. Եթե գաղտնի քվեարկությունը չի սկսվել մինչև ժամը 19:00-ն, նիստն ընդմիջվում է մինչև հաջորդ օրը ժամը 9:00-ն՝ անկախ նրանից, հաջորդ օրն աշխատանքային է, թե ոչ: Եթե գաղտնի քվեարկությունը սկսվել է, ապա նիստը շարունակվում է մինչև քվեարկության ավարտը և ընտրության արդյունքների մասին որոշման կայացումը:

5. ԵՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

5.1. Նիստում քննարկումներից հետո խորհրդի նախագահը, ըստ ազգանունների այբբենական հերթականության, հրապարակում է հավակնորդների ազգանուն-անունները: Եթե վերջիններս իրենց անունը հրապարակելու պահին ինքնաբացարկ չեն հայտնում, ապա նրանց թեկնածությունը ներառվում է քվեաթերթիկում:

5.2. Խորհրդի նախագահը ներկայացնում է գաղտնի քվեարկության կարգը:

5.3. Խորհուրդն իր կազմից ընտրում է 5 անդամներից կազմված հաշվիչ հանձնաժողով:

5.4. Հանձնաժողովը՝

ա) կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը,

բ) կազմում է տնօրենի ընտրության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը (երկու օրինակից),

գ) հրապարակում է տնօրենի ընտրության քվեարկության արդյունքները:

5.5. Հանձնաժողովի անդամների թեկնածություններն առաջադրում են խորհրդի անդամները: Խորհրդի՝ հավակնորդ հանդիսացող անդամները չեն կարող առաջադրվել և առաջադրել հաշվիչ հանձնաժողովի անդամության թեկնածուներ: Յուրաքանչյուր անդամի առաջադրումից հետո կազմակերպվում է քվեարկություն: Առաջադրումներն ու քվեարկությունները շարունակվում են մինչև հանձնաժողովի կազմի համալրումը:

5.6. Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.7. Տնօրենի ընտրությունների քվեաթերթիկները ստորագրվում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

5.8. Տնօրենի ընտրությունների քվեաթերթիկում նշվում են թեկնածուների ազգանուն-անունները՝ այբբենական հերթականության: Յուրաքանչյուր թեկնածուի

ազգանվան-անվան դիմաց առկա է ‘կողմ’ գրառումով վանդակը (հավելված 1.2): Մեկ թեկնածուի առկայության պարագայում նրա ազգանվան և անվան դիմաց առկա են ‘կողմ’ և ‘դեմ’ գրառումներով վանդակներ (հավելված 1.1):

5.9. Խորհրդի անդամը հաշվիչ հանձնաժողովից քվեաթերթիկ ստանալիս ցուցակում ստորագրում է իր անվան-ազգանվան դիմաց:

5.10. Խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

5.11. Ընտրողը քվեաթերթիկում համապատասխան նշում է կատարում իր նախընտրած թեկնածուի ազգանվան-անվան դիմաց՝ ‘կողմ’ գրառմամբ վանդակում՝ հետևյալ կերպ՝ ‘V’: Մեկ թեկնածուի առկայության պարագայում ընտրողը նշում է կատարում ‘կողմ’ կամ ‘դեմ’ գրառումներով վանդակներից միայն մեկում:

5.12. Քվեարկության ավարտից հետո հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում մեկական քվեաթերթիկ, հայտարարում քվեարկության արդյունքը և փոխանցում հանձնաժողովի անդամներին՝ տեսակավորելու համար: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը կարող է պահանջել քվեարկության դնել քվեաթերթիկի անվավեր լինելու հարցը:

5.13. Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե չի համապատասխանում սույն կանոնակարգի 5.11 կետի պահանջներին կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում: Քվեաթերթիկի անվավերության վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի որոշումը ընդունվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.14. Հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (հավելված 2.1 կամ 2.2):

Արձանագրության մեջ գրվում է՝

ա) քվեաթերթիկ ստացածների թիվը (ըստ ցուցակի ստորագրությունների),

բ) քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

գ) անվավեր քվեաթերթիկների թիվը,

դ) թեկնածու(ներ)ի ազգանուն(ներ)ը և յուրաքանչյուրի ստացած ձայները:

5.15. Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Մեկից
ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած ‘կողմ’ ձայների քանակի նվազման հաջորդականության:

5.16. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները խորհրդի նիստում: Քվեարկության ընթացքի կամ քվեաթերթիկների հաշվման ընթացքի վերաբերյալ հանձնաժողովի՝ առարկություն ունեցող անդամը, քվեարկության արդյունքները ներկայացնելուց հետո կարող է խորհրդին ներկայացնել նախօրոք գրավոր շարադրած հատուկ կարծիք: Խորհուրդը բաց քվեարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտում ներկայացված բոլոր հատուկ կարծիքների վերաբերյալ:

5.17. Քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝
ա) տնօրեն ընտրվելու մասին,
բ) քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին,
գ) ընտրությունն անվավեր ճանաչելու և տնօրեն չընտրվելու մասին,
դ) ընտրությունը չկայացած ճանաչելու և տնօրեն չընտրվելու մասին:
5.18. Տնօրենի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:
5.19. Առաջին փուլի քվեարկության արդյունքում ընտրությունը համարվում է չկայացած, իսկ տնօրենը՝ չընտրված, եթե քվեարկված միակ թեկնածուն չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ, կամ եթե քվեարկվել են երկու և ավելի թեկնածուներ, և նրանք միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:
5.20. Քվեարկության երկրորդ փուլն անցկացվում է, եթե քվեարկվել են երկու կամ ավելի թեկնածուներ, և նրանցից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Այս դեպքում երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, եթե նրանք միասին հավաքել են խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները: Եթե առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ, ապա երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երեք, իսկ երրորդ թեկնածուին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպ- քում՝ նաև այդ թեկնածուները:
5.21. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝
ա) տնօրեն ընտրվելու մասին.
բ) քվեարկության երրորդ փուլ անցկացնելու մասին,
գ) ընտրությունը չկայացած ճանաչելու և տնօրեն չընտրվելու մասին:
5.22. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունը ճանաչվում է չկայացած, իսկ տնօրենը համարվում չընտրված, եթե քվեարկված թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:
5.23. Քվեարկության երրորդ փուլ անցկացվում է, եթե քվեարկության երկրորդ փուլի արդյունքում թեկնածուներից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Երրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:
5.24. Երրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝
ա) տնօրեն ընտրվելու մասին.
բ) ընտրությունները չկայացած ճանաչվելու և տնօրեն չընտրվելու մասին:

5.25. Երրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունը ճանաչվում է չկայացած, իսկ տնօրենը՝ համարվում չընտրված, եթե որևէ թեկնածու չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ:
5.26. Տնօրենի ընտրության արդյունքը ձևակերպվում է խորհրդի որոշմամբ, որը ստորագրում է խորհրդի նախագահը:
5.27. Տնօրենի ընտրական գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը խորհրդի նիստի արձանագրության հետ պահվում են ԵՊՀ-ում:
5.28. Ընտրության ընթացակարգի խախտումները և ընտրության արդյունքները կարող են բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.29. Ընտրությունը խորհրդի կողմից ճանաչվում է անվավեր, եթե ընթանում է ՀՀ օրենսդրության, ԵՊՀ կանոնադրության, սույն կանոնակարգի էական խախտումներով: Եթե խախտումները տեղի են ունեցել մինչև տնօրենի ընտրության համար գումարված խորհրդի նիստը, ապա ընտրությունն անվավեր ճանաչելու դեպքում խորհուրդը հայտարարում է նոր մրցույթ: Եթե խախտումները տեղի են ունեցել տնօրենի ընտրության համար գումարված խորհրդի նիստում կամ քվեարկության փուլում, ապա ընտրությունն անվավեր ճանաչելու դեպքում խորհուրդը հայտարարում է նոր քվեարկություն:

Հավելված 1.1

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Հոգաբարձուների խորհրդի «___»_____թ. նիստում
ամսաթիվ,
տարեթիվ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության փակ (գաղտնի) քվեարկության

թեկնածուի ազգանուն, անուն

կողմ դեմ

**) Նշումը կատարվում է 'կողմ' կամ 'դեմ' գրառումներով վանդակներից միայն մեկում: Թեկնածությանը կողմ լինելու դեպքում 'V' նշում է կատարվում 'կողմ', իսկ դեմ լինելու դեպքում՝ 'դեմ' գրառմամբ վանդակում:*

Հավելված 1.2

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Հոգաբարձուների խորհրդի «___»_____թ. նիստում
ամսաթիվ,
տարեթիվ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության փակ (գաղտնի) քվեարկության

Թիվ	*Թեկնածուի ազգանուն, անուն*	*Կողմ*
1.		
2.		
3.		
4.		
5.		

**) Որևէ մեկ թեկնածությանը կողմ լինելու դեպքում քվեաթերթիկում համապատասխան 'V' նշում է կատարվում նախընտրած թեկնածուի ազգանվան-անվան դիմաց՝ 'կողմ' գրառմամբ վանդակում:*

Հավելված 2.1.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է Երևանի պետական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի '___' _____ թ. նիստում
ամսաթիվ, տարեթիվ

հետևյալ կազմով՝

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

1.___(նախագահ),
2._____
(քարտուղար), 3._,
4.__,
5.__:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին
____ը: Քվեարկվել է ԵՊհ Իջևանի
մասնաճյուղի տնօրենի թեկնածությունը:
Քվեարկությանը մասնակցել են խորհրդի ____ անդամներ:
Բաժանվել է ____ քվեաթերթիկ:
Քվեատուփում առկա էր___
քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով___- ը
Ազգանուն, անուն
ընտրված է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրեն:

Կամ՝

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրությունը համարվում է չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _ _____
ստորագրություն ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1.___ _____,
ստորագրություն ազգանուն, անուն

2.___ _____,
ստորագրություն *ազգանուն, անուն*
3.___ _____,
ստորագրություն *ազգանուն, անուն*
4.___ _____:
ստորագրություն *ազգանուն, անուն*

Հավելված 2.2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է Երևանի պետական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի ‘__ ’ _____ թ. նիստում
ամսաթիվ, տարեթիվ

հետևյալ կազմով՝

1.___(նախագահ),
2._____
(քարտուղար), 3.__,
4.___,
5.___:
Խորհրդի 32 անդամներից ներկա էին ____ը:
Քվեարկվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի թեկնածությունը:
Քվեարկությանը մասնակցել են խորհրդի ____ անդամներ:
Բաժանվել է ____ քվեաթերթիկ:
Քվեատուփում առկա էր___ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

ԹԻՎ	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ԿՈՂՄ
1.		
2.		
3.		
4.	Անվավեր	

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով___- ը
ազգանուն, անուն
ընտրված է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրեն:

Կամ՝

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում ԵՊՀ ԻՄ տնօրեն, իսկ ներքոհիշյալ թեկնածուները՝

1.___,
ազգանուն, անուն

2.___,
ազգանուն, անուն

3. __
ազգանուն, անուն

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Կամ՝

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրությունը համարվում է չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____ _____
ստորագրություն *ազգանուն, անուն*

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ ՝

1.___ _____,
ստորագրություն *ազգանուն, անուն*

2.___ _____,
ստորագրություն *ազգանուն, անուն*

3.___ _____,
ստորագրություն *ազգանուն, անուն*

4.___ _____:
ստորագրություն *ազգանուն, անուն*